

Արձանագրություն

Հյուսիսային համալսարանի տնտեսագիտության կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետին կից

Բիզնես ինկուբատորի հիմնադրման նիստի

2022թ. –ի սեպտեմբերի 9-ին Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝
Համալսարան) կարիերայի կենտրոնում տեղի ունեցավ տնտեսագիտության և
կառավարման ամբիոնին կից Բիզնես ինկուբատորի հիմնադիր նիստը:

Օրակարգ՝

- Բիզնես ինկուբատորի կանոնադրության քննարկում, առաջարկների ներկայացում:
- Բիզնես ինկուբատորի կառավարման սխեմայի ներկայացում:
- Ընտրություններ՝ Բիզնես ինկուբատորի կառավարման խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի և գործադիր տնօրենի տեղակալի պաշտոններում:

Նիստին մասնակցեցին՝

- Համալսարանի ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանը,
- որակի ապահովման վարչության պետ Ս.Ավագյանը,
- իրավաբանական կլինիկայի ղեկավար Թ. Բաղդասարյանը,
- ուսումնական վարչության աշխատակից Ա.Գրիգորյանը,
- ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Ճուղուրյանը,
- ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչներ Ա.Ավետիսյանը և Ջ.Աղաբաբյանը,
- ուսանողներ՝ առկա և հեռակա համակարգերից:

Ներկայացրեցին՝

- Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Ճուղուրյանը մասնակիցներին ներկայացրեց նիստի օրակարգը:
- Ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչ Ջ.Աղաբաբյանը մասնակիցներին ներկայացրեց Բիզնես ինկուբատորի գործունեության շրջանակը և հեռանկարները:

Արտահայտվեցին՝

Ներկայացված տեղեկատվության վերաբերյալ ծավալվեց ակտիվ քննարկում, որի ընթացքում իրենց առաջարկություններով հանդես եկան՝

- Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանն առաջարկեց հանդիպում կազմակերպել այլ համալսարաններում գործող և ուղի անցած բիզնես ինկուբատորների ներկայացուցիչների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:
- Ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչ Ա.Ավետիսյանն առաջարկեց փորձի փոխանակման նպատակով հանդիպումների մասնակցելուց առաջ, նախ կուտակել որոշակի փորձ՝ ունենալով համագործակցությունների որոշակի բազա:
- «Կառավարում» մասնագիտությամբ 5-րդ կուրսի (հեռակա) ուսանողուհի Ա.Օվստյանն առաջարկեց կազմել առաջիկա գործողությունների պլան՝ նախատեսվելիք գործողությունների կատարման արդյունավետության բարձրացման և արագ ընթացքի ապահովման նպատակով:
- Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Ճուղուրյանը առաջարկեց թեկնածություններ՝ Բիզնես ինկուբատորի կառավարման խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի և գործադիր տնօրենի տեղակալի պաշտոններն ստանձնելու համար:

Որոշեցին՝

- Բիզնես ինկուբատորի կառավարման խորհրդի նախագահ ընտրվեց տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Ճուղուրյանը:
- Բիզնես ինկուբատորի գործադիր տնօրեն ընտրվեց Ջ.Աղաբաբյանը:
- Բիզնես ինկուբատորի գործադիր տնօրենի տեղակալ ընտրվեց՝ համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» բաժնի 4-րդ կուրսի (առկա) ուսանողուհի Լ. Խեչումյանը:

Նիստը վարեց՝

տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, պրոֆ.՝ Ա.Ճուղուրյանը:

Արձանագրությունը կազմեց՝

Բիզնես ինկուբատորի գործադիր տնօրենի տեղակալ՝ Լ.Խեչումյանը:

Գործադիր տնօրեն՝ Ջ.Աղաբաբյան

Գործադիր տնօրենի տեղակալ՝ Լ.Խեչումյան